

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆԱԴԱՐՅԱՆ ՆԱՐԵ ԹԱԹՈՒԼԻ

ԽԱԶԱՏՈՒՐ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

ԺԷ.00.03 - «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտությամբ արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2018

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСКУССТВ

НАДАРЯН НАРЕ ТАТУЛОВНА

ТВОРЧЕСТВО ХАЧАТУРА ИСКАНДАРЯНА

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата искусствоведения по специальности 17.00.03 – “Изобразительное искусство, декоративное и прикладное искусство, дизайн”

ЕРЕВАН – 2018

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում:
Գիտական ղեկավար՝

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր
ԱՂԱՍՅԱՆ Արարատ Վլադիմիրի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր
ՀԱԿՈՔՅԱՆ Հրավարդ Հրաչյայի
արվեստագիտության թեկնածու

ՎԱՐԴԱՆՅԱՆ Հռիփսիմե Էդուարդի

Առաջատար կազմակերպություն՝ Խ.Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2018թ. սեպտեմբերի 27-ին, ժամը՝ 14.00-ին,
ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի 016 Արվեստագիտության
մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ Երևան, 0019, Մարշալ Բաղրամյան
պողոտա 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի
գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018թ. օգոստոսի 27-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝

Ասատրյան Ա.Գ.

Тема диссертации утверждена в Институте искусств НАН РА.

Научный руководитель – член-корреспондент НАН РА,
доктор искусствоведения, профессор
АГАСЯН Арарат Владимирович

Официальные оппоненты – доктор искусствоведения, профессор
АКОПЯН Гравард Грачьевич
кандидат искусствоведения
ВАРДАНЯН Рипсиме Эдуардовна

Ведущая организация – Армянский государственный педагогический
университет им. Хачатуря Абовяна

Защита диссертации состоится 27-го сентября 2018г. в 14.00 часов на
заседании специализированного совета 016 Искусствоведение ВАК РА, действующего в
Институте искусств НАН РА (адрес: Ереван, 0019, проспект Маршала Баграмяна 24/4).

С диссертацией можно ознакомиться в библиотеке Института искусств НАН РА.
Автореферат разослан 27-го августа 2018г.

Ученый секретарь специализированного совета,
доктор искусствоведения, профессор

Асатрян А.Г.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: ՀՀ ժողովրդական նկարիչ, քանդակագործ Խաչատուր Իսկանդարյանը (1923-2015) ստեղծել է գեղանկարչական, գրաֆիկական, խեցեգործական, մոնումենտալ և մոնումենտալ-դեկորատիվ աշխատանքներ: Սակայն նա նախապատվությունը տվել է հաստոցային քանդակին և մանր պլաստիկային, որտեղ էլ դրսևորվել է տաղանդաշատ արվեստագետի վարպետությունը:

Անգնահատելի է Իսկանդարյանի ներդրումը մանրաքանդակի ոլորտում: Իր ողջ կյանքը նվիրելով մանրաքանդակին, նա բացահայտել է իր գաղափարագեղարվեստական խնդիրները, հարստացրել այն նոր նվաճումներով: Իսկանդարյանն առաջին հայ քանդակագործներից էր, ով զարգացրեց մանր պլաստիկան:

Աշխատանքի նպատակն ու խնդիրները: Առենախոսության նպատակն է Խ.Իսկանդարյանի ստեղծագործության համակողմանի ուսումնասիրությունը: Կարևորել ենք հետևյալ խնդիրները՝

- ներկայացնել այն ժամանակաշրջանի գեղարվեստական կյանքը, որում ընթացել է քանդակագործի գործունեությունը,
- ներկայացնել նրա ներդրումը կերպարվեստի մյուս ժանրերում, խոսել քանդակագործի գեղանկարչական և գրաֆիկական բնանկարների մասին, որոնք հիմնականում ստեղծվել են եվրոպական տարբեր երկրներում արվեստագետի ճանապարհորդությունների ընթացքում,
- ուսումնասիրել մանրաքանդակները և բացահայտել դրանց բնորոշ առանձնահատկությունները,
- դիտարկել միաֆիգուր մանրաքանդակները և խմբաքանդակները,
- ուսումնասիրել «Հին Ուզբեկստան», «Ճապոնիա», «Պարոզներ», «Գիքոր», «Քաջ Նազար», «Հուշեր հին Երևանից» քանդակաշարերը,
- ներկայացնել դիմաքանդակները, վերլուծել պորտրետային արձանիկների հայտնի և անհայտ օրինակները,
- քննության առնել մոնումենտալ և մոնումենտալ-դեկորատիվ քանդակները:

Թեմայի մշակվածության աստիճանը: 1967-ին Երևանում տեղի ունեցած Իսկանդարյանի անհատական ցուցահանդեսի առթիվ Հայաստանի կերպարվեստագետների միությունը հրատարակել է արվեստագետի ստեղծագործությունների կատալոգը՝ Մարիամ Այվազյանի առաջաբանով¹, որտեղ արվեստաբանը համառոտ բնութագրել է Խ.Իսկանդարյանի արվեստը:

Խ.Իսկանդարյանի քանդակների ուսումնասիրության գործում արժեքավոր է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արարատ Աղասյանի «Հայ կերպարվեստի

¹ Տե՛ս Խաչատուր Իսկանդարյան: Կատալոգ (կազմող՝ Մարիամ Այվազյան), Երևան, 1967, էջ 55:

զարգացման ուղիները XIX-XX դարերում» մենագրության² և «Հայ արվեստի պատմություն» կոլեկտիվ աշխատության³ մեջ քանդակագործի ստեղծագործության ուսումնասիրությանը նվիրված բաժինները:

Իսկանդարյանի արվեստին թուուցիկ անդրադարձ է կատարել բանաստեղծ Մանիկ Աճեմյանը, ում կազմած պատկերագրքում խոսվում է քանդակագործի հուշերի մասին⁴:

Կարևոր են նաև Իսկանդարյանի աշխատանքներին Սուրեն Ստեփանյանի⁵, Ռուբեն Դրամբյանի⁶, Մանյա Ղազարյանի⁷ արվեստաբանական մեկնաբանություններ ու վերլուծություններ պարունակող անդրադարձերը:

2010-ին հրատարակվել է Խ.Իսկանդարյանի կյանքի և արվեստի վերաբերյալ պատկերագրող կատալոգ, որը կազմել է արվեստաբան Սյուզաննա Փիլոսյանը: Այբոմում տեղ են գտել արվեստագետի քանդակագործական, գեղանկարչական և գրաֆիկական հիմնական գործերը, նաև Իսկանդարյանի լուսանկարները՝ հարազատների, արվեստագետ ընկերների հետ: Կատալոգի ներածական հոդվածում Ս.Փիլոսյանը ներկայացրել է Խ.Իսկանդարյանի կյանքի կարևոր դրվագները, համառոտ վերլուծել որոշ աշխատանքներ⁸:

Աշխատության գիտական նորույթը: Ատենախոսության մեջ առաջին անգամ համալիր ուսումնասիրվել է հայ քանդակագործ Խ.Իսկանդարյանի ստեղծագործությունը՝

- ներկայացվել է նրա ծավալած գործունեությունը,
- վերլուծվել և համակարգվել են նրա ստեղծագործությունները,
- լուսաբանվել են քանդակագործին պատկանող հայտնի ու անհայտ ստեղծագործությունները,
- գիտական շրջանառության մեջ են դրվել արխիվային նյութեր, հոդվածներ ժամանակի մամուլից,
- անդրադարձ է արվել Խ. Իսկանդարյանի քանդակներին, ճշգրտվել

² Տե՛ս **Աղասյան Ա.**, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, Երևան, 2009, էջ 292:

³ Տե՛ս **Աղասյան Ա., Հակոբյան Հ., Հասրաթյան Մ., Ղազարյան Վ.**, Հայ արվեստի պատմություն, Երևան, 2009, էջ 579:

⁴ Տե՛ս Պատգամ. Խաչատուր Իսկանդարյան: Պատկերագիրք (կազմող՝ Մանիկ Աճեմյան), Երևան, 2014, էջ 14:

⁵ Տե՛ս **Ստեփանյան Ա.**, Արվեստագետի վստահ քայլերը, «Սովետական արվեստ», Երևան, 1967, № 4, էջ 37-40:

⁶ Տե՛ս **Դրամբյան Ռ.**, Երիտասարդ նկարիչների ցուցահանդեսը, «Սովետական արվեստ», Երևան, 1957, № 5, էջ 16-20:

⁷ Տե՛ս **Ղազարյան Մ.**, Նկարիչների արվեստանոցում, «Սովետական Հայաստան», Երևան, 1959, 2 ապրիլի:

⁸ Տե՛ս ՀՀ վաստակավոր նկարիչ, քանդակագործ Խաչատուր Իսկանդարյան. քանդակ, գեղանկար, գրաֆիկա: Այբոմ (կազմող՝ Սյուզաննա Փիլոսյան), Երևան, 2010, էջ 160:

են դրանց անվանումներն ու տարեթվերը: Ուսումնասիրելով «Պարողներ» շարքը, բացահայտվել է, որ քանդակաշարում ընդգրկված «Բիրմական պար»-ը Հասմիկ Փիլիպոսյանի «Հայկական քանդակագործություն» պատկերագրքում սխալմամբ ներկայացված է որպես ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Սամվել Մանասյանի աշխատանք⁹, իսկ «Հին Ուզբեկստան» քանդակաշարում գտնվող բոլոր քանդակները Մարիամ Այվազյանի առաջաբանով գրված կատալոգում ուրիշ կերպ են անվանված¹⁰: Եթե, օրինակ, Սյուզաննա Փիլոսյանն իր կատալոգում ներկայացված աշխատանքն անվանում է «Հանգստացող ուզբեկը»¹¹, ապա Մ.Այվազյանն այն անվանում է «Սովետներ անապատում», իսկ «Մանրավաճառը»՝ «Բլիթներ վաճառողը», «Ուզբեկը՝ ավանակով»՝ «Իշուկին նստած ուզբեկը», «Զրուցող կանայք»՝ «Մտերմական գրույց»: Այլ են նաև ստեղծագործությունների տարեթվերը. Փիլոսյանը շարքի բոլոր աշխատանքները վերագրում է 1956 թ., իսկ Այվազյանը նշում է 1962 թ.:

Ուսումնասիրության աղբյուրները: Ուսումնասիրության համար նյութ են ծառայել Հայաստանի ազգային պատկերասրահի հուշածեռագրային բաժնում և քանդակագործի անձնական արխիվում պահվող վավերագրերը:

Աշխատության գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքները կարող են լրացնել 20-21-րդ դարերի հայ կերպարվեստի գործիչների կյանքի և ստեղծագործությանը նվիրված շարքը, օգտագործվել բուհերի հայ արվեստի պատմության դասընթացներում:

Աշխատության փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնում: Աշխատանքի հիմնական դրույթները զեկուցվել են ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասներորդ (10-11 նոյեմբերի, 2015), տասնմեկերորդ (30 սեպտեմբերի - 2 հոկտեմբերի, 2017) և տասներկուերորդ (22-23 նոյեմբերի, 2017) նստաշրջաններում, հրատարակվել նստաշրջանների նյութերի ժողովածուներում և Երևանում լույս տեսնող գիտական պարբերականներում՝ (Լրաբեր, ԿԱՆԹԵՂ, Հայագիտական հանդես):

Աշխատության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և պատկերագրից:

⁹ Տե՛ս Հայկական քանդակագործություն, Երևան, Հայաստանի ազգային պատկերասրահ (առաջաբանի հեղինակ՝ Հասմիկ Փիլիպոսյան), Երևան, 2004, էջ 53:

¹⁰ Տե՛ս Խաչատուր Իսկանդարյան: Կատալոգ (կազմող՝ Մարիամ Այվազյան), էջ 17:

¹¹ ՀՀ վաստակավոր նկարիչ, քանդակագործ Խաչատուր Իսկանդարյան. քանդակ, գեղանկար, գրաֆիկա: Ալբոմ (կազմող՝ Սյուզաննա Փիլոսյան), էջ 108:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը, նշված են նպատակն ու խնդիրները, գնահատված է ուսումնասիրվող թեմայի գիտական մշակվածության աստիճանը, ներկայացված է գրականության տեսությունը, շեշտված է աշխատության գիտական նորույթը:

ԳԼՈՒԽ Ա.

ԽԱՉԱՏՈՒՐ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆԻ ԿՅԱՆՔԸ

Խ.Իսկանդարյանը ծնվել է 1923թ. հունվարի 1-ին Երևանում, ատաղձագործի ընտանիքում: Յոթ տարեկանում Խաչատուրն ընդունվում է Ստ.Շահումյանի անվան դպրոց, որտեղ սովորում է 1930-1934 թթ.: 1935թ. տեղափոխվում է Մ.Գորկու անվան դպրոց, իսկ 1936թ. ուսումը շարունակում 26 կոմիսարների անվան արական դպրոցում: 1938թ. ընդունվում է Լ.Բերիայի անվան դպրոցը, որտեղ էլ դրսևորվում են Խաչատուրի գեղարվեստական ընդունակությունները. նա դառնում է խմբագրական կոլեգիայի անդամ, պատի թերթեր է նկարում և ձևավորում¹²: Շարունակելով ուսումը, Իսկանդարյանը զուգահեռաբար հաճախում է պատանի ստեղծագործողների խմբակ: 1937թ. Իսկանդարյանն ընդունվում է Երևանի Պիոներների պալատի քանդակի բաժինը և աշակերտում քանդակագործ Սամվել Մանասյանին: Ուսումնառության ընթացքում ընդլայնվում է Խ.Իսկանդարյանի ստեղծագործական հետաքրքրությունների շրջանակը, և դպրոցն ավարտելուց հետո (1938) նա ընդունվում է Երևանի գեղարվեստական ուսումնարանի գեղանկարի բաժինը:

1941թ. սկսվում է Հայրենական մեծ պատերազմը, և Խ.Իսկանդարյանը, կիսատ թողնելով ուսումը, զբաղվում է տարբեր աշխատանքներով, իսկ պատերազմի ավարտից հետո ընդունվում և 1951թ. ավարտում է Երևանի Գեղարվեստի ինստիտուտի քանդակի բաժինը: Ուսումնառության ընթացքում (1948) ապագա քանդակագործը մասնակցում է տարբեր ցուցահանդեսների՝ ներկայացնելով իր փոքրաչափ, մանրաձավալ, միաֆիգուր ու բազմաֆիգուր ժանրային կոմպոզիցիաները: Այդ շրջանում Իսկանդարյանի ստեղծած աշխատանքները հիմնականում կենցաղային տեսարաններ են, որոնցում արվեստագետը բավարարվում է մարդկային բնորոշ կերպարների և սովորական իրավիճակների պարզ վերարտադրությամբ: 1949թ. նա ստեղծում է «Փոքրիկ երաժիշտները» բազմաֆիգուր քանդակը: Այնուհետ իր քանդակներով, գրաֆիկական աշխատանքներով ու գեղանկարներով Իսկանդարյանը մշտապես մասնակցում է ցուցահանդեսների՝ Հայաստանում և հանրապետության սահմաններից դուրս: Իսկանդարյանը մասնակցել է 84 ցուցահանդեսների:

1967թ. անհատական ցուցահանդեսի բացումից հետո Խ.Իսկանդարյանն արժանանում է ՀԽՍՀ վաստակավոր նկարչի կոչմանը: 2000թ. նա ար-

¹² Տե՛ս **Իսկանդարյան Խ.**, Ինքնակենսագրություն, ձեռագիր, Խ.Իսկանդարյանի անձնական արխիվ, էջ 1:

Ժանանում է ՀՀ պաշտպանության նախարարության՝ Մարշալ Հովհաննես Բաղրամյանի անվան մեդալի, իսկ 2002թ.՝ ՀՀ մշակույթի նախարարության պատվոգրի:

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի 2011թ. մայիսի 24-ի հրամանագրով Խ.Իսկանդարյանին շնորհվել է ՀՀ Ժողովրդական նկարչի պատվավոր կոչում:

2015թ. 92-ամյա վարպետի առողջությունը կտրուկ վատացել է և նույն թվականի մարտի 25-ին նա կնքել է իր մահկանացուն:

ԳԼՈՒԽ Բ.

ԽԱՉՏԱՏՈՒՐ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆԻ ՄԱՆՐԱՔԱՆՊԱԿՆԵՐԸ

Խ.Իսկանդարյանը հասարակության ուշադրությունն իր վրա գրավեց 1950-ականներին, երբ հանրապետական ու համամիութենական ցուցահանդեսներում երևացին նրա՝ ծավալով ոչ մեծ, բազմաֆիգուր և միաֆիգուր քանդակները¹³: Դրանք հիմնականում սուր բնութագրումներով, ուշագրավ ու կենդանի գործողություններ և իրավիճակներ ներկայացնող կամերային փոքր ձևեր են, որոնց շնորհիվ քանդակագործը ցանկանում էր արձանագրել-դրոշմել Ժամանակը՝ նրան տալով նյութեղեն-իրական արտահայտություն: «Իմ լավագույն ընկերն ու բարեկամը՝ անվանի քանդակագործ Նիկողոս Նիկողոսյանը, Երևանում ցուցադրել էր իր մանրաքանդակներից մի քանիսը, որոնք չափազանց դուր եկան ինձ, և ես սկսեցի զբաղվել մանրաքանդակներով: Առհասարակ ես Նիկողոսյանից շատ բան եմ սովորել», - խոստովանել է Իսկանդարյանը¹⁴:

Իսկանդարյանը մանրաքանդակներով հրապուրվել էր դեռևս 1937թ., երբ հաճախում էր Երևանի Պիոներների պալատի քանդակագործության խմբակը: Այդ հրապուրանքը նրան ուղեկցեց ողջ կյանքում: Եթե վաղ շրջանի մանրաքանդակներում քանդակագործը հավատարիմ էր քանդակագործության ավանդական ձևերին և լուծումներին, ապա հետագայում ձևավորվում է նրա անհատական ոճը, ստեղծագործությունները դառնում են ազատ ու համարձակ:

Մանր պլաստիկայի զարգացումը Հայաստանում սկսվել է 19-րդ դարի վերջին քառորդից՝ ռուսական և եվրոպական քանդակագործության փորձը հարստացնելու շնորհիվ: Կամերային փոքր ձևերը հեղինակին հնարավորություն են տալիս լիարժեք արտահայտել սեփական մտքերը, հույզերը, գեղագիտական ճաշակն ու նախասիրությունները, հեղինակային մոտեցումները, բացահայտել ստեղծագործական յուրահատուկ ձեռագիրը: Դրանք շարժուն են, թույլ են տալիս քանդակագործին ավելի անկաշկանդ փորձել, որոնել արտահայտչական նոր հնարավորություններ¹⁵: Իսկանդարյանը նշում է. «Փոքր քան-

¹³ Տե՛ս Խաչատուր Իսկանդարյան, էջ 5:

¹⁴ Տե՛ս **Փիլոսյան Ս.**, Խաչատուր Իսկանդարյան, «Համայնապատկեր», Երևան, 2003, 22 հունվարի:

¹⁵ **Միքայելյան Կ.**, Իրողության հավաստումից դեպի գեղարվեստական ճշմարտություն, «Սովետական արվեստ», Երևան, 1985, № 9, էջ 8:

դակները հնարավորություն են տալիս միտքը, հույզը, ապրումը՝ ժամանակի հետ միասին ավելի անմիջականորեն և ճիշտ հասցնել դիտողին: Մոնոմենտալ գործերում այդ բանը դժվար է իրականացնել, այստեղ ուրիշ մոտեցում է պետք, ուրիշ լեզու և ուրիշ արտահայտչամիջոցներ»¹⁶:

Իսկանդարյանը փոքր ծավալի քանդակներ է ստեղծել ոչ միայն վերոնշյալ հանգամանքներից ելնելով: Պատճառներից մեկն էլ այն է, որ նա ստեղծագործել է Հայրենական մեծ պատերազմի տարիներին. «Պատերազմը հայկական արվեստի մեջ մտցրեց էական փոփոխություններ, որոնք արտացոլվեցին ստեղծագործությունների թեմատիկայում, ժանրերում և տեսակներում: Բնականաբար, պատերազմական տարիներին արվեստի տարբեր տեսակները չէին կարող զարգացման միանման ընթացք ունենալ: Քանդակագործության ասպարեզում կանգ է առնում մոնոմենտալիստների գործունեությունը՝ առաջնությունը տալով հաստոցային քանդակին...»¹⁷:

Փոքրաչափ, մանրածավալ քանդակները սովորաբար ունեն մանրակրկիտ պլաստիկական մշակում, ինչը ոչ միշտ ենք տեսնում Իսկանդարյանի ստեղծագործություններում. հաճախ վարպետի ստեղծած քանդակների ծեփվածքը մոտենում է իմպրեսիոնիստ քանդակագործների կիրառած՝ այսպես կոչված «երփնագրային ծեփվածքին»: Թվում է, թե այդ հյութեղ ծեփվածքներով ստեղծված աշխատանքները պետք է զուրկ լինեն կոնկրետությունից, սակայն դա այդպես չէ. քանդակագործն ամեն մեկի դեմքին ու դիրքում բնավորության յուրահատուկ գծեր է նշմարել: Նա ստեղծել է տխուր, ուրախ, պարկեշտ, կեղծավոր, բարեհոգի, պարծենկոտ կերպարներ, ինչը ցույց է տալիս, որ Իսկանդարյանի ստեղծած մանրաքանդակների հերոսներն ունեն յուրահատուկ բնավորություններ: Քանդակագործն իր հերոսների հետ է, յուրաքանչյուրի մեջ: Նա սիրում է իր հերոսներին այնպիսի վարակիչ սիրով, որ ակամայից դառնում է իր ստեղծած աշխատանքների կերպարներից մեկը, ապրում այդ ֆիգուրների մեջ, դառնում նրանց ուրախության ու վշտի մասնակիցը:

Մանրաքանդակը Իսկանդարյանի գեղարվեստական ժառանգության ամենածանրակշիռ մասն է: Ստեղծագործության բնութագրումներից շատերում բացահայտվել են նրա վարպետության նորանոր կողմերը:

2.1. Խաչատուր Իսկանդարյանի միաֆիգուր մանրաքանդակները

Իսկանդարյանն աշխատում էր տարբեր նյութերով, այդ թվում՝ բրոնզով, պղնձով, փայտով, քարով, կոփածո պլյումինով: Նա այն արվեստագետներից էր, ովքեր կարողանում էին տարբեր նյութերը ենթարկել իրենց՝ պահպանելով ոճի ու չափի զգացումը: Իսկանդարյանը հիանալի զգում էր ամեն մի նյութի գեղարվեստական, արտահայտչական հնարավորությունները և ազատորեն ընտ-

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Հայկական քանդակագործություն, էջ 14:

րում այն նյութը, որն առավել ընդունակ էր մարմնավորելու քանդակագործի մտահղացումները:

Թեև Իսկանդարյանն օգտագործում էր տարբեր նյութեր, սակայն հիմնականում նախընտրում էր բրոնզը: Ասվածի լավագույն օրինակներից են «Ապատում» (բրոնզ, 1970), «Կինը պատկերասրահում» (բրոնզ, 1981), «Մեղեդի» (բրոնզ, 1985), «Աղջիկը օճառի պղպաշակներով, կատուների հետ» (բրոնզ, 1987) միաֆիգուր քանդակները:

Երբեք չխզելով կապը դասական ռեալիզմի ավանդույթների և սկզբունքների հետ՝ Իսկանդարյանը, այդուհանդերձ, որոնում էր արտահայտչական նոր միջոցներ՝ օգտվելով ժամանակակից կերպարվեստի նորարարական առանձին տարրերից, ձևաոճական եղանակներից ու հնարներից: Քանդակագործն անհրաժեշտության դեպքում գործածում էր դրանք, որպեսզի արտահայտեր այն, ինչ զգում էր, ինչը նոր լիցք էր հաղորդում նրա աշխատանքներին: Այդ պատճառով էլ դժվար է սահմանափակել քանդակագործի աշխատանքները գեղարվեստական որևէ ուղղության հստակ շրջանակով:

Տեխնիկական վարպետության, հմտության հետ մեկտեղ Իսկանդարյանն ուներ գեղարվեստական տարբեր ոճերի նուրբ զգացողություն՝ նրա ռեալիստական քանդակների կողքին տեսնում ենք նաև ռոմանտիզմից («Մեղեդի», 1985, «Անձրև», 1976, «Օհան Դուրյան», 1992), ֆուտուրիզմից («Հեծանվորդները», 1984) ազդված աշխատանքներ:

2.2. Խաչատուր Իսկանդարյանի խմբաքանդակները

Իր խմբաքանդակներում Խ.Իսկանդարյանն օգտագործել է պլաստիկական հմուտ ու նուրբ մշակումներ: Աշխատանքները տարբերվում են թեմաների բազմազանությամբ: Կոմպոզիցիաների համար հատկանշական են բազմաֆիգուրայնությունը և տեսարանի հետաքրքրաշարժ պատկերումը: Խմբաքանդակներն իրենց բովանդակությամբ հասանելի են դիտողին, աչքի են ընկնում զգացմունքայնությամբ, շարժունների բնականությամբ, կոմպոզիցիոն-տարածական ազատ դասավորությամբ:

Խ.Իսկանդարյանի խմբաքանդակները («Դաշտային խոհանոց», 1958, «Երեք կիթառահարներ», 1960, «Մանկապարտեզի երեխաները», 1962, «Նրանք չվերադարձան», 1962, «Պապիկին հաղթեցինք», 1975, «Ցուցահանդեսի քննարկում», 1980, «Թոշակառուները», 1983 ևն) պլաստիկական յուրատեսակ պատումներ են, որոնցում պատկերված մարդկանց բնորոշ դիրքերը, արտահայտիչ դիմագծերն ու խոսուն, էքսպրեսիվ շարժումները լի են կենդանի բնականությամբ:

2.3. Խաչատուր Իսկանդարյանի քանդակաշարերը

Խ.Իսկանդարյանը ստեղծել է թեմատիկայով, ոճով մեկ ամբողջություն կազմող տարբեր քանդակաշարեր, որոնցից են «Հին Ուրբեկստան», «Ճապոնիա», «Պարողներ», «Գիքոր», «Քաջ Նազար», «Հուշեր հին Երևանից»՝ հիշողությամբ արված մանրաքանդակները: Չբավարարվելով ձեռք բերածով՝ Խ-

կանդարյանն ստեղծել է քանդակագործական յուրահատուկ՝ կենցաղային բնույթի սյուժետային շարքեր, յուրօրինակ մանրապատումներ, որոնք լուծված են ստեղծագործական ազատ, անկաշկանդ եղանակով:

2.3.1. «Հին Ուզբեկստան» և «Ճապոնիա» քանդակաշարերը

«Հին Ուզբեկստան» և «Ճապոնիա» խորագրերով քանդակաշարերն արևելյան կենցաղային մոտիվներ արծարծող և ազգային բնորոշ կերպարներ ներկայացնող խեցեղեն բազմերանգ կամ բրոնզաձույլ աշխատանքներ են:

Գունազգացողությամբ օժտված Իսկանդարյանը չէր կարող անտարբեր մնալ քանդակի գունային արտահայտչականության նկատմամբ. նյութն ընտրելիս Իսկանդարյանը, տեխնիկական հնարավորություններից բացի, «Հին Ուզբեկստան» քանդակաշարում կարևորել է գույնը:

Իսկանդարյանն իր «Հին Ուզբեկստան» քանդակաշարում հիմնականում ներկայացնում է արևահար ու հողմահար աշխատավորների կերպարներ՝ կարևորելով նրանց հոգու պարզությունը, կենսական ուժը և անմիջականությունը: Նրա ստեղծած աշխատավորների կերպարներն անպաճույճ են, նույնիսկ՝ փոքր-ինչ նայիվ, բայց նրանց թվացյալ պարզունակությունը բացատրվում է ավելի շուտ նրանով, որ մոտիվներն առօրեական են, բնական: Կերպարներն օժտված են հոգեբանական բնութագրերով և անհատական գծերով. չնայած որոշակի ընդհանրությանը՝ որսված է տիպականը:

Բոլորովին այլ մշակումներով է լուծված «Ճապոնիա» (բրոնզ, 1966) քանդակաշարը, որում ընդգրկված աշխատանքները միավորված են գեղարվեստական ընկալման ընդհանրությամբ: «Հին Ուզբեկստան» քանդակաշարի համեմատ սրանք ավելի քիչ են մշակված: Կերպարներն այնքան պարզեցված ու ընդհանրացված են, որ նույնիսկ նշմարելի չեն ֆիգուրների ո՛չ աչքերը, ո՛չ հոնքերը և ո՛չ էլ շուրթերը: Ֆիգուրների դեմքերն ուղղակիորեն էլիպսաձև, հարթ ֆորմաներ են, իսկ մարմնաձևերը կարծես տափակ ու անմշակ ձուլակտորներ լինեն: Եվ չնայած այս ամենին՝ նկատվում են անհատականացված կերպարներ և անհատական բնութագրումներ: Իսկանդարյանը ֆիգուրի բուն լուծման մեջ արտահայտել է նյութի հետ պայքարելու ճիգերը, ստեղծողի գերիշխանությունը նյութի վրա, և այդ զգացողությունը հաղորդում է դիտողին: Վերջինս, կարծես, անավարտ քանդակի ստեղծման ընթացքի մասնակիցն է դառնում: Այդ զգացողությունը գալիս է նաև քանդակագործի իմպրեսիոնիստական մտածողությունից. դիտողը կարծես մտնում է Իսկանդարյանի արվեստանոցը, դառնում արձանի ծննդյան ականատեսը: Արվեստագետի համար էականն ու որոշիչը ոչ թե մանրակրկիտ պատկերումն է, այլ ձևի ու ռճի, դեկորատիվության ու կռահված պատկերացումների մեծ ընդհանրացումները, որոնք դիտողին հնարավորություն են տալիս կենտրոնանալ առաջնայինի վրա, ակտիվացնել սեփական երևակայությունը:

2.3.2. «Պարողներ» քանդակաշարը

Իսկանդարյանն իր առաջին լուրջ հաջողությունն արձանագրել է «Պա-

րողներ» շարքով (1957): Այս շարքի համար քանդակագործն արժանացել է Հայաստանի երիտասարդական առաջին փառատոնի դափնեկրի կոչման և ոսկե մեդալի¹⁸: Քանդակաշարում ընդգրկված են տարբեր ազգերի ներկայացուցիչներ, ովքեր ունեն իրենց ինքնատիպ ապրելակերպը, դարերով մշակված տարազների կոլորիտային տեսակները: Ժամանակի ընթացքում նրանք մշակել են իրենց ազգագրական սովորույթները, որոնց մեջ հատկապես առանձնանում են ազգային պարերը: Դիտողի աչքի առաջ կենդանանում են տարբեր ազգության մարդիկ՝ պարի տարերքի մեջ: Իրապաշտության վրա հիմնված և պլաստիկորեն սահուն մշակված պարողների կերպարներն աչքի են ընկնում շարժումների բնականությանը, դեմքերի կենդանի արտահայտությանը, լուսաստվերային խաղով, շերտավոր զգեստի տակից թափանցող մարմինների բարեկազմությամբ: Պարողների ճկունությունը, նազելիությունը գրավում է, դյուբում, համակում տոնական տրամադրությամբ: Քանդակագործը կարողացել է ստույգ գտնել պարողների ձեռքերի և մարմինների շարժումները: Ու թեև պարողները երիտասարդ են և կենսախիռո, բայց նրանց մեջ էլ զգում ես այն անհանգստությունը, պատասխանատվությունը, որը բնորոշ է ելույթի, համերգի մասնակիցներին: Իսկանդարյանին հուզում են և՛ բնորդի հոգեբանական ապրումները, և՛ պարի մեջ քարացած մարմնի զուտ արտաքին, գեղարվեստական և բնական ներդաշնակությունը: Մարմնի պլաստիկան ինքնատիպ է և արտահայտիչ: Պարողների անհատականացված դիմագծերը որոշակի են, իսկ նրանց դիմախաղը, ներքին տրամադրությունը, արտաքին դիմաշարժությունը թողնում են կենդանի ու անմիջական տպավորություն:

2.3.3. «Գիքոր» և «Քաջ Նազար» քանդակաշարերը

Իսկանդարյանի «Գիքոր» և «Քաջ Նազար» քանդակաշարերում պլաստիկական ինքնատիպ մարմնավորում են գտել Հովի.Թումանյանի համանուն պատմվածքը և նրա լավագույն հեքիաթներից մեկը: Եթե գրականությունը դիմում է մարդուն խոսքի միջոցով, ապա կերպարվեստը գործ ունի տեսանելի և շոշափելի պատկերների, ձևերի ու ծավալների, գծերի ու գույների հետ: Ի տարբերություն գրական հերոսների, որոնց մասին հայտնի է և այն, թե նրանք ովքեր են եղել առաջ, ինչ վիճակ են ապրում ներկայումս և ինչ է սպասում նրանց ապագայում, քանդակային կերպարը մեր առջև երևում է միայն մեկ անգամ, այնպիսին, ինչպիսին է տվյալ պահին: Նա չունի ժամանակի մեջ զարգանալու, փոփոխվելու ու փոխակերպվելու հատկություն:

Ու եթե երփնագրության մեջ մենք կարող ենք տեսնել գեթ գործողություն, հերոսի միջավայրը, տեսնել նրա շրջապատը գույնով, ինչպես լինում է կյանքում, ապա քանդակը (հազվադեպ բացառություններով) դրանից էլ զուրկ է: Չընդունելով քանդակի պայմանականությունը՝ անհնար է հասկանալ

¹⁸ Տե՛ս ՀՀ վաստակավոր նկարիչ, քանդակագործ Խաչատուր Իսկանդարյան. քանդակ, գեղանկար, գրաֆիկա, էջ 9:

այն, քանի որ նրա ներգործության ուժը հենց դրանում է, այն ամենի մեջ, ինչը կազմում է նրա գեղարվեստական լեզուն, առանձնահատկությունները:

«Գիքոր» (1962, ճենապակի) քանդակաշարում Իսկանդարյանը, պատմվածքի կերպարներն առավել պատկերավոր դարձնելու նպատակով ներկել, գունավորել է դրանք: Ֆիգուրների ինքնատիպությունը շեշտելու համար Իսկանդարյանն աշխատանքները մշակել է այնպես, որ դիտողն զգում է բազալ Արտեմի աչքերի սևությունը կամ Գիքորի այտերի կարմրությունը... Իսկանդարյանը բոլոր միջոցներով ջանացել է հասնել առավելագույն արտահայտչականության, և դա նրան հաջողվել է, որովհետև նա դրսևորել է չափի նուրբ զգացողություն: «Գիքոր» քանդակաշարին բնորոշ են զգացմունքով ներշնչված արտահայտիչ լուծումները: Նրա խեցեգործությունն օրգանական է, նրա կերպարները հուզում են, կլանում առանձնահատուկ վերապրումով և ջերմությամբ:

Երգիծական տիպերի, շարժումների ու բնութագրությունների մի ամբողջական շղթա է «Քաջ Նազար» (1958, բրոնզ) քանդակաշարը¹⁹: Այս աշխատանքները պլաստիկական լուծումներով մոտ են միմյանց, սակայն յուրաքանչյուրի ձևական լուծումը փոխակերպված է ըստ պատմվածքի տվյալ դրվագի: Իսկանդարյանի ստեղծագործությունները սոցիորված են խոր կենսասիրությամբ ու ներգործող անմիջականությամբ: Հումորը մի դեպքում առանց հեգնանքի է, բարի ու սրտաբաց, մյուս դեպքում՝ սարկազմի հասնող: Մանրապատումների՝ երբեմն գրոտեսկի հասնող ձևերում դիպուկ գտնված բնավորություններ են:

2.3.4. «Հուշեր հին Երևանից» քանդակաշարը

Հայ քանդակագործներից Խ.Իսկանդարյանը միակն է, ով ստեղծել է հին Երևանին նվիրված մանրաքանդակների շարք: Նրա կերտած կերպարները օտարված կերպարներ չեն, ոչ էլ՝ առասպելացված: Նրանք կարծես կյանքի ընթացքից պատահաբար անջատված, քանդակագործի հուշերում տպավորված և նրա ձեռքով անմիջապես ստեղծված իրական հերոսների պատկերներ են, ովքեր զբոսնում են հանրային պարտեզներում ու պուրակներում, զրուցում են, դանակ-մկրատ սրում, լրագիր կարդում, նվագում, կոշիկ մաքրում, ջուր վաճառում: Սրանք միաֆիգուր և բազմաֆիգուր արձանիկներ են, հումորով համեմված ժանրային կոմպոզիցիաներ, կենցաղային տեսարաններ: «Աստաֆյանով ման էի գալիս, փոքր տղա էի, էս բոլորը լցվեցին հուշապարկս, և ուզեցի անմահացնել: Կոմպոզիցիաների վերածեցի: Ուրախ եմ, որ դրանք դարձան բրոնզածույլ: Իմն են: Եվ ինձ ոչ ոք չի կարող կրկնօրինակել, իսկույն կիմացվի»²⁰: Իսկանդարյանը «Հուշեր հին Երևանից» շարքի մասին խոսելիս նշում է. «Ինձ հա-

¹⁹ Տե՛ս Պարսամյան Ռ., Նոր վերելքի ճանապարհին, «Սովետական արվեստ», Երևան, 1962, № 1 էջ 26:

²⁰ Տե՛ս Մկրտչյան Շ., Տաղանդը չի ծերանում..., «Երևան 7 օր», Երևան, 2004, 11-14 սեպտեմբերի, էջ 6:

ճախ հարցնում են, թե ինչո՞ւ են ես ստեղծում հին երևանցու քանդակաշարը, իսկ ես պատասխանում եմ, որ նրանց կերպարներով եմ հիշում իմ երիտասարդության քաղաքը: Այն ժամանակ մարդիկ հարգում էին միմյանց, հիմա չգիտես ովքեր են Երևանի «տերերը» և ինչեր են անում քաղաքի հետ»²¹:

Արվեստագետի ներշնչանքի աղբյուրը եղել է Հին երևանցու փողոցը²², որտեղից կյանքի ուղեգիր են ստացել երկու տասնյակ արվեստագետներ: «Հուշեր հին Երևանից» քանդակաշարը որոշ մարդկանց համար կարող է հետաքրքիր լինել որպես ազգագրական տեսարանների ցուցադրում, իսկ շատերի համար՝ ուղղակի որպես դուրեկան քանդակների շարք: Բայց մարդկանց մեծ մասի համար այն հետաքրքիր է իբրև մի անէացող երկիր, որն իր հետ տարավ շատերի մանկությունը: Այդ երկիրը, որտեղ մարդիկ համակված էին կյանքի հարուստ ընդհանրությամբ, դարձել է հուշ և վերածնվել քանդակագործի աշխատանքներում: Վերջինս սերունդների համար կդառնա տարեցտարի թանկացող հիանալի վավերագիր:

Ու ինչպես դժվար է անտարբեր ընթերցել մանկություն պատկերող մի գեղարվեստական երկ, ճիշտ այդպես էլ դժվար է հանգիստ դիտել Իսկանդարյանի մանրաքանդակները և չզգալ այն սերը, խանդաղատանքը, ջերմությունը, որ քանդակագործը տաժել է հին Երևանի հանդեպ:

Շարքում տեղ գտած աշխատանքները կատարված են կերպարային ամբողջականությամբ, հումորով, որտեղ ակներև է հեղինակի սուր դիտողականությունը և մանրամասները նկատելու կարողությունը: Իսկանդարյանի քանդակների գեղարվեստական արժեքն այն է, որ նա կարողացել է իր հերոսներին պատկերել պարզ ու բնական ձևով, ինչպես նրանք կան առօրյա կյանքում: Նա ներկայացնում և «հերոսացնում» է հին Երևանի շարքային բնակիչներին, որոնք լուսանկարում ու լուսանկարվում էին, թերթ, ջուր ու ծաղիկ էին վաճառում...

Նրանք անկրկնելի երանգ, «համ ու հոտ» էին տալիս քաղաքին ու ստեղծում ջերմության ու մտերմության յուրահատուկ մթնոլորտ:

ԳԼՈՒԽ Գ.

ԻԱԶԱՏՈՒՐ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆԻ ԴԻՄԱՔԱՆԴԱԿՆԵՐԸ

Ինչպես գիտենք, դիմաքանդակում առաջնահերթ խնդիրներից մարդու դիմագծերի, նմանության պատկերումը, ինչը բավական հետաքրքիր լուծումներ է գտել Խ.Իսկանդարյանի արվեստում: Ներկայացնելով տվյալ անձնավորության առանձնահատկությունները՝ Իսկանդարյանը պատկերվողի դեմքի ու դիմախաղի միջոցով բացահայտել է նրա ներաշխարհը, անհատականությունը, ազգային պատկանելիությունը և հասարակական կարգավիճակը: Նա վար-

²¹ Պատգամ. Խաչատուր Իսկանդարյան, էջ 11:

²² Երևանի Կենտրոն վարչական շրջանում գտնվող փողոցը անվանվել է ի պատիվ հին երևանաբնակների: 19-րդ դարում փողոցը կոչվել է Սաղովայա, 20-րդ դարում՝ Թելմանի, ապա՝ Կամոյի, Լալայանց:

պետությամբ ու սիրով է ներկայացրել իր ժամանակակիցներին, հարազատներին, մեր մշակույթի անվանի գործիչներին: Նրա բնորոշներից յուրաքանչյուրը մտքի և գործողության միաձուլման մարմնավորում է՝ ստեղծված առանց ավելորդ չափազանցումների, պլաստիկական ու կոմպոզիցիոն զուսպ լուծումներով:

Դիմաքանդակով Իսկանդարյանը սկսել է զբաղվել 1957-ից: Շարժառիթը, ըստ երևույթին, քանդակագործի ուղևորությունն էր Ալավերդի, աշխատանքը Պղնձաքիմիական կոմբինատում, ուր քանդակագործը սկսում է բացահայտել աշխատավորի կերպարը: Իսկանդարյանն ստեղծում է «Բեռնակիր Մելիք Մելիքյան» (1957), «Ձուլող բանվոր Հրաչ» (1957), «Քարտաշ Ա.Գրիգորյան» (1958), «Քարտաշ Ա.Գրիգորյան» (1958), «Քարտաշ Նոսենկո» (1963) դիմաքանդակները և «Ձուլող բանվոր Տելեմակ Մնացականյան» (1957), «Բանվոր» (1960) կիսաֆիգուրները²³: Այս աշխատանքները ստեղծվել են այդ մարդկանց հետ անմիջական շփման, նրանց աշխատանքի հանդեպ անկեղծ հրապուրանքի արդյունքում: Իսկանդարյանը նրանցից յուրաքանչյուրին պատկերել է կոմպոզիցիոն չկրկնվող լուծումներով, առանց գեղեցկացնելու և իդեալականացնելու բնորդին, ստեղծել աշխատավոր մարդու կերպարը: Հեղինակի մոտ այն կոնկրետացված է, նրա բնորոշ օժտված է անհատական գծերով:

1960-ական թթ. Իսկանդարյանի աշխատանքներում փոփոխություններ են կատարվում: Եթե բանվորների դիմաքանդակներում (որոնք իր առաջին աշխատանքներն էին) քանդակագործը դեռ կաշկանդված ու կախված էր բնօրինակից, ապա այսուհետ նա ձգտում է արտահայտվել պլաստիկական ավելի հարուստ ու ճկուն լեզվով, ինչը հիմնականում նկատելի է մշակույթի նվիրյալներին պատկերող դիմաքանդակներում («Արմեն Արմենյան», 1962, «Քրիստափոր Պետրոսյան», 1962, «Արամիկ Ղարիբյան», 1963, «Վահան Կասյան», 1965, «Արմեն Տիգրանյան», 1966, «Մարտիրոս Սարյան», 1966, «Ռուբեն Դրամբյան», 1971, «Բարթոլո Վարդանյան», 1975, «Նիկողոս Նիկողոսյան», 1976, «Դերենիկ Դեմիրճյան», 1981, «Ռուբեն Ջարյան», 1981, «Մուրադ Կոստանյան», 1982, «Մհեր Մկրտչյան», 1999 և այլն): Քանդակագործը վարպետորեն է պատկերել արվեստագետների դեմքերը, հոգեբանական որոշակի խորությամբ օժտել կերպարները: Նա դիմաքանդակի մեջ արտահայտել է այն եզակին, մասնավորը, որը հատուկ է առանձին մարդուն, կազմում է նրա էությունը, տարբերում նրան մյուս մարդկանցից:

Ասվածի լավագույն օրինակներից է ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Արմեն Արմենյանի (փայտ, 1962) դիմաքանդակը: Աշխատանքը բանվորների դիմաքանդակներից տարբերվում է նյութով ու ձևով: Այստեղ ինքը՝ կերպարը, հեղինակին թելադրել է մոնումենտալ լուծումներ գտնել: Դրանք ձեռք են բերվել ոչ թե խոշոր մասշտաբների և ծավալների օգնությամբ, այլ կերպարի ճիշտ բնութագրման և պլաստիկական ընդհանրացումների միջոցով: Փայտաքանդա-

²³ Տե՛ս Խաչատուր Իսկանդարյան, Երևան, 1967, էջ 6:

կին հատուկ՝ դուրի գործածմամբ առերես անփույթ, բայց իրականում մշակված ձևերը քանդակի մակերևույթի վրա ստեղծում են լույսի և սուվերի անհանգիստ խաղ՝ իրենց անհանգստությունը հաղորդելով կերպարին: Սովորաբար մարմարի, բրոնզի համեմատ փայտն ավելի քիչ է տալիս ֆակտուրայի բազմազան մշակումների հնարավորություններ: Սակայն այս քանդակում Իսկանդարյանը, հենվելով իր պրոֆեսիոնալ կարողության վրա, տվել է հարուստ ֆակտուրա ազատ ու անկաշկանդ հարվածներով՝ չկորցնելով քանդակային ձևերի ու ծավալների միասնականությունը:

Ուշագրավ է արվեստաբան Ռուբեն Դրամբյանի՝ կամերային բնույթի, հոգեբանական մեկնաբանությունն ստացած դիմաքանդակը (բրոնզ, 1971), որն ստեղծված է Նուրբ լուսասուվերային մակերեսներով: Բրոնզը ֆակտուրային այնպիսի մշակման է ենթարկված, որ լույսն ամենուր տարածվում է մեղմ անցումներով՝ նյութին հաղորդելով թավշի փափկություն: Իսկանդարյանը, կարևորելով Դրամբյանից ստացած առաջին տպավորությունը, ուշադրություն է դարձրել արվեստաբանի բնավորության հաստատուն ու հիմնական գծերին: Վարպետորեն են ներկայացված բնորդի ներանձնային ապրումները: Նուրբ ու շեշտված են պատկերված խորախորհուրդ մտքի տեր, զգայուն արվեստաբանի դեմքի ծալքերը:

Իսկանդարյանն իր դիմաքանդակներում կարևորել է կերպարների բնավորության առավել կայուն հատկանիշները: Բայց չի կարելի պնդել, թե քանդակագործին չեն հետաքրքրել այս կամ այն պահին մարդկանց ունեցած մտքերն ու տրամադրությունները, նրանց ներաշխարհում խմորվող հույզերը:

Իսկանդարյանի գեղարվեստական ժառանգության մեջ հատուկ նշանակություն ունեն նաև պորտրետային արձանիկները: Չբավարարվելով պատկերվող մարդկանց միայն արտաքին նմանությամբ՝ Իսկանդարյանը կիրառել է գեղարվեստական այնպիսի միջոցներ, արտահայտչական այնպիսի հնարներ, որոնք բացահայտել են կերպարների ինչպես արտաքին, այնպես էլ ներքին նկարագրերը: Նա իր ուշադրությունը կենտրոնացրել է բնորդների դեմքերի արտահայտության, նրանց խոսուն հայացքի, բնութագրական շարժումների, հոգեբանական խառնվածքների վրա... Արվեստագետին հատկապես հրապուրել են գաղափարական հաստատուն նկարագրեր ունեցող, ստեղծագործական աշխույժ կյանքով ապրող մարդկանց կերպարները: Վկայակոչենք ամենաբնորոշ օրինակները՝ «Մարտիրոս Սարյան» (1967), «Վիլյամ Սարոյան» (1971), «Գրիգոր Մեղնիկյան» (1973), «Բարդուղ Վարդանյան» (1975), «Դերենիկ Դեմիրճյան» (1981), «Մարշալ Հովհաննես Բաղրամյան» (1981), «Մուրադ Կոստանյան» (1982), «Լիդիա Դուռնով» (2006):

Մեծ թիվ են կազմում Իսկանդարյանի կերտած իր ընկերոջ՝ անվանի քանդակագործ Նիկողոս Նիկողոսյանի կերպարները: Մոտիկից ճանաչելով քանդակագործին, քաջատեղյակ լինելով նրա գործունեությանը՝ նա Նիկողոսյանին ներկայացրել է անկեղծ, մտերմիկ ու անմիջական: 1976-ին ստեղծված

գրեթե միանման բրոնզե երկու դիմաքանդակային արձանիկներում բազմոցի մեջ ընկղմված Նիկողոսյանի կերպարներին Իսկանդարյանը խոհական արտահայտություն է հաղորդել: Իսկանդարյանը օբյեկտիվորեն է կերպավորել նրան. քանդակագործը խուսափել է սուբյեկտիվ գնահատականներից, վստահել սեփական աչքին ու ղեկավարվել ստեղծագործական սթափ գիտակցությամբ: Իր ստեղծած կերպարներում նա չի կիրառել ակադեմիական քարացած, մամոռտած ձևեր: Քանդակներում կերպարները մշակված են այնպիսի ձևերով, որոնք սովորաբար կիրառվում են էքսպրոմտով՝ հանպատրաստից աշխատելու ընթացքում, ստեղծագործական ներշնչման պահին: Արձանիկներն արտահայտիչ են՝ որպես հաստատական ու, միաժամանակ, հախուռն խառնվածք ունեցող արվեստագետի կերպարներ:

Այս շարքի պորտրետային արձանիկների մեջ աչքի են ընկնում նաև ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ Գաբրիել Գյուրջյանին պատկերող բրոնզե երեք քանդակները, որոնցից առաջին երկուսն ստեղծվել են 1977-ին, իսկ երրորդը՝ 1978-ին: Կարծում ենք, որ 1977-ին ստեղծված քանդակներից մեկը, որտեղ Գյուրջյանը ներկայացված է թիկնակով աթոռին նստած, առանց թիկնակ նստարանին նստած աշխատանքի նախօրինակն է. քանդակը թողնված է անավարտ էտյուդային վիճակում: Թեև երկրորդ աշխատանքը ներկայացված է համեմատաբար ավարտուն, մշակված տարբերակով, սակայն երկուսում էլ Իսկանդարյանն ավելի մեծ ուշադրություն է դարձրել ձևին, քան բովանդակությամբ: Բնականից փոքր-ինչ գեր մարմին ունեցող Գյուրջյանը քանդակագործի աշխատանքներում ներկայացված է ծավալային, զանգվածային մշակումներով. կերպարներն ունեն բնական կեցվածքներ և հոգեբանական ինքնամիտի նկարագրեր: Այս երկու արձանիկների արժանիքներից մեկն այն է, որ դրանք կատարված են անմիջական ընկալումով՝ առանց կանխամտածված ձևերի: Երրորդ աշխատանքում Գյուրջյանը ներկայացված է ամբիոնի մոտ կանգնած՝ թղթապանակը ձեռքին (ի դեպ, վերոնշյալ երկու քանդակներում ևս առկա է թղթապանակը): Իսկանդարյանը վարպետորեն է ներկայացրել Գյուրջյանի և՛ դեմքը, և՛ կեցվածքը՝ ձգված, զգաստ, ամբիոնի բարձրությունից շատ քիչ տարբերվող հասակ, դեպի վեր ուղղված հայացքին ենթարկված գլուխ, խոսելու պատրաստ շրթունքներ: Արվեստագետին հաջողվել է կոմպոզիցիոն զուսպ ձևերի օգնությամբ ցույց տալ Գյուրջյանի էներգիայով լի, գործնական աշխույժ խառնվածքը և ինքնուրույնությունը: Իսկանդարյանը փորձում է հասնել ընդհանրացումների ոչ մանրակրկիտ մշակված ֆակտուրայի շնորհիվ: Խ.Իսկանդարյանի թոռը՝ կրտսեր Խաչատուրը, որը լավ է հիշում պապի ստեղծած քանդակների պատմությունները, մեզ հետ զրույցում հաղորդեց, որ Գյուրջյանը, տեսնելով իր արձանիկը, թեև հավանել է այն, սակայն հումորով նշել է, որ կարելի էր մի փոքր իրականությունից շեղվել և իրեն ավելի բարձրահասակ ներկայացնել:

Դիմաքանդակային արձանիկներում նախապատվությունը տալով հե-

րոս-անհատներին՝ Իսկանդարյանը վեր է հանել մարդու յուրօրինակությունը և եզակիությունը: Քանդակագործն իր ստեղծած կերպարներից յուրաքանչյուրին ներկայացրել է ինքնատիպ ներաշխարհով, որոշակի արտահայտությամբ, տրամադրությամբ, ապրումներով, պլաստիկ կենդանի ձևերով: Նրան հատուկ է բնորդի հոգևոր աշխարհը նրբորեն զննելու, թեման ուսումնասիրելու և մարմնավորելու կարողությունը:

ԳԼՈՒԽ Դ.

ԻՍԶԱՏՈՒՐ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆԻ ՄՈՆՈՒՄԵՆՏԱԼ ԵՎ ՄՈՆՈՒՄԵՆՏԱԼ-ԴԵԿՈՐԱՏԻՎ ՔԱՆԴԱԿՆԵՐԸ

Իսկանդարյանի ստեղծագործության մեջ մեծ տեղ են գրավում մանրաքանդակները, որոնցով քանդակագործը սկսել է զբաղվել ստեղծագործական կյանքի առաջին տարիներից, սակայն արվեստագետի ժառանգության մեջ առկա են նաև մոտ 20 մոնումենտալ քանդակներ: Քանդակների զգալի մասը տեղադրված է Երևանում, Լենինականում (ներկայումս՝ Գյումրի), Աշտարակում, Իջևանում, Հրազդանում, Վայքում, Վարդենիսում... Իր առաջին մոնումենտալ աշխատանքներից մեկը՝ կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանի հուշարձանը (1961, բրոնզ, բազալտ, ճարտարապետ՝ Էդմոն Տիգրանյան), տեղադրված է Գյումրիում: Հետագայում 1975թ., Գյումրիում, Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանի բակում տեղադրվում է Իսկանդարյանի հեղինակած Ավետիք Իսահակյանի հուշարձանը (բրոնզ, ճարտարապետ՝ Ազատ Լեյլոյան):

1964թ. Իջևանում տեղադրվում է «Գուրգեն Էդիլյան» հուշարձանը (բազալտ, ճարտարապետ՝ Մարգարիտ Հայրապետյան), Արտաշատում Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված հուշարձանը (1968, բազալտ, ճարտարապետ՝ Մարգարիտ Հայրապետյան), Լիեպայում (Լատվիա) «Նելսոն Ստեփանյան» հուշարձանը (1970, բրոնզ, Երեմ Վարդանյանի հետ համատեղ), Ստեփանակերտում «Ազատարարը» հուշարձանը (1970, կոփածո պղինձ, ճարտարապետ՝ Մարգարիտ Հայրապետյան): 1968թ. Հրազդանում, իսկ 1978թ. Վայքում կանգնեցվում է Վ.Ի.Լենինի հուշարձանները: Հրազդանի բազալտե հուշարձանը ստեղծել է Հակոբ Հովհաննիսյանի հետ համատեղ: Հուշարձանի ճարտարապետը Ռաֆայել Իսրայելյանն է, իսկ Վայքում տեղադրված՝ կրկին բազալտե հուշարձանի ճարտարապետը՝ Զիմ Թորոսյանը:

1982թ. Իսկանդարյանն ստեղծում է աշխարհահռչակ աստղաֆիզիկոս, ՀԽՍՀ ԳԱ պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանի բրոնզաձույլ կիսանդրին (ճարտարապետ՝ Ստեփան Քյուրքչյան), որը տեղադրված է Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի հրապարակում: Պատկերված է ոգեշունչ կերպար, որն օժտված է հայրենասիրությամբ և լավատեսությամբ:

Հատուկ ուշադրության է արժանի Երևանում Իսկանդարյանի ստեղծած մոնումենտալ քանդակներից մեկը՝ «Հակոբ Մեղապարտ» (1987, գրանիտ, ճարտարապետ՝ Մարգարիտ Հայրապետյան) հուշարձանը, որի մրցույթին մաս-

նակցել է Իսկանդարյանը և արժանացել է առաջին կարգի մրցանակի: Հակոբ Մեղապարտի քանդակն աչքի է ընկնում կոմպոզիցիոն յուրահավաք ու ձիգ համակարգով, կերպարային լիավարտ բնութագրով: Այսպես, մեծաչափ հուշարձանի կենտրոնում տպագրիչն աջ ձեռքով հենվել է սեղանին, իսկ ձախով ներկայացնում է «Ուրբաթագիրքը»: Նրա գլխի և ուսերի դիրքը, հակադրվելով աթոռակին դրված աջ ոտքի հետադարձ ձևին, ստեղծում է դինամիկ, կտրուկ կոնտրաստ: Վերևում լույսը խորհրդանշող պատուհան է, որ հայ իրականության մեջ բերում է առաջին տպագիր գիրքը՝ «Ուրբաթագիրքը», տպագրիչի պարզած ձեռքում: Ներքևում իրար վրա շարված 5 գիրք է քանդակված՝ «Ուրբաթագիրքը», «Պատարագատետրը», «Աղթարքը», «Պարզատումարը», «Տաղարանը»: Գրքերի տակ շրջանակի մեջ վերցրած երկգիծ քառակուսու մեջ խաչածև տպարանանիշն է: Չորս մասի բաժանված շրջանակում լատինական սկզբնատառեր են՝ D. I. Z. A. (Dei Servus Jacobus Zanni Armenius), ինչը նշանակում է հետևյալը՝ «Աստվածատուր հայ Հակոբ Մեղապարտ»:

Կարծր քարերի և փայտի տարբեր տեսակների հետ մոնումենտալ-դեկորատիվ քանդակներում օգտագործվում են բազմերանգ մարմարը, գունազարդված խեցեղեն կավը, գունափառով ծածկված մետաղը ևն²⁴: Այդ աշխատանքները բարձր գաղափարներ չեն արտահայտում և ճարտարապետության մեջ համահնչունորեն զարդարում են պատերի, ծածկերի, ճակատների մակերեսները և իրենց արխիտեկոննիկ զարդարվեստային արտահայտչամիջոցներով սահմանակից են դեկորատիվ արվեստին: Մոնումենտալ-դեկորատիվ քանդակի խնդիրը ճարտարապետական կառույցին լրացնելը և ամբողջական տեսք հաղորդելն է: Այն ճարտարապետական թե՛ ինտերիերի, թե՛ էքստերիերի մաս է: Այս աշխատանքներն ունեն դեկորատիվ և կոնստրուկտիվ բնույթ: Այդպիսի քանդակներից է 1988թ. Երևանի «Ավաստ» գործարանի պատին տեղադրված «Գիտություն» հարթաքանդակը (կոփածո այլումին): Իսկանդարյանը մի դեպքում ձգտել է ծավալի ճշգրիտ և նուրբ մշակումներով հարազատ մնալ մարդկային իրական կերպարանքներին, իսկ մյուս դեպքում՝ նրա կիրառած ստեղծագործական եղանակում գերիշխել է անսովոր պլաստիկական ծավալների հասնելու ցանկությունը: Դա են վկայում կնոջ և տղամարդու կերպարների մարմինների մեջ բացված անցքերն ու ճեղքերը: Իսկանդարյանը գեղարվեստական միջոցներով արտահայտել է ստեղծագործ աշխատանքի վեժ գաղափարը և ներկայացրել գիտությունը խորհրդանշող, արժանապատիվ, հպարտ կերպարներ: Ձեռքերը վեր պարզած ֆիգուրների վերևում է գտնվում տիեզերքը խորհրդանշող պատկերը, որը կարծես ամփոփում և ամբողջացնում է ստեղծագործության գեղարվեստական գաղափարը: Քանդակագործը ձգտել է վերարտադրել իր ժողովրդի լուսավոր ապագայի հույսերով ապրող մարդկանց: Նա ստեղծել է մոնումենտալ-դեկորատիվ բնույթի հարթաքանդակ, որն անկրկնելի է կատար-

²⁴ Նույն տեղում:

ման իր եղանակով, նյութի յուրահատուկ հնարավորությունների օգտագործմամբ, կերպարային վառ նկարագրով:

Իսկանդարյանի անհատականությունը և ստեղծագործական խառնվածքն առկա են նրա յուրաքանչյուր գործում՝ լինի դա դիմաքանդակ, մանրաքանդակ, թե մոնումենտալ կամ դեկորատիվ աշխատանք: Հիմնականում պլաստիկական լակոնիկ եղանակով վերարտադրելով բնորոշների անձնական դիմագծերը, քանդակագործը ձգտել է տիպական ընդհանրացումների՝ մարմնավորելով տարբեր բնավորության ու զբաղմունքի տեր մարդկանց, և ստեղծել անհատականության հանդեպ մեծ ուշադրությամբ աչքի ընկնող, պլաստիկական համոզիչ և գեղարվեստական արտահայտիչ ձևերով կատարված, ներքին բովանդակությամբ լի կերպարներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մանրաքանդակը Խ.Իսկանդարյանի գեղարվեստական ժառանգության ամենածանրակշիռ մասն է: Քանդակագործը ներկայացրել է հասարակ մարդկանց՝ նրանց առօրյայից վերցնելով իր քանդակի նյութն ու շունչը:

Թեև Իսկանդարյանն օգտագործում էր տարբեր նյութեր (բրոնզ, պղինձ, փայտ, քար, կոփածո այլումին), սակայն հիմնականում նախընտրում էր պլաստիկական ճկուն, արագ ենթարկվող նյութը՝ բրոնզը, որն, ի տարբերություն տևականորեն հատվող ու տաշվող՝ կարծր, պինդ, ամուր ու կոշտ նյութերի, արվեստագետին հնարավորություն էր ընձեռում լայնորեն դրսևորելու իր ստեղծագործական խառնվածքն ու ոճը՝ ստեղծելով ամենքիս նման ուրախացող և տխրող, մտորող ու զգացող մարդկանց կերպարներ:

Իսկանդարյանի արվեստում փոքր-ինչ այլ է կնոջ կերպարը. եթե արվեստագետներից շատերին հետաքրքրել է կնոջ մերկ մարմինը, ապա Իսկանդարյանին կինը հետաքրքրել է որպես անզուգական ընկեր, առողջ դատող, աշխատանքի պաշտամունք ունեցող, գթասիրտ, անձնագրի էակ, ում արվեստագետը ներկայացրել է իր թեմատիկ-կոմպոզիցիոն աշխատանքներում:

Քանդակագործն իր քանդակները հիմնականում ստեղծել է կոմպոզիցիոն-տարածական ազատ դասավորությամբ, դիտակետերի հարստությամբ, գեղարվեստական կերպարներին վերաբերող հատուկ՝ սուր ու հնարամիտ նկարագրերով:

Խ.Իսկանդարյանը մի կողմից՝ հենվել է դասական ավանդույթների վրա, իսկ մյուս կողմից՝ հաշվի է առել իմպրեսիոնիստների նվաճումները: Այդ երկու միտումներն արվեստագետը կիրառել է ֆիզուրատիվ փոքր քանդակներում, որոնք շեշտում են ապրելու գերագույն իմաստը, հաստատում կյանքը, շարժումը, բարին:

Խ.Իսկանդարյանը միակ հայ քանդակագործն է, ով ստեղծել է հին երևանին նվիրված մանրաքանդակների շարք, որում ընդգրկված են նրա քանդակներից առավել նշանավորները:

Արվեստագետը դիմաքանդակներում պատկերել է այնպիսի անձանց, ովքեր հերոսներ են ոչ թե արտաքին հատկանիշներով՝ կեցվածքով, դեմքի արտահայտությամբ, այլ՝ հոգեկան ներքին անդորրով, վեհանձնությամբ, ամեն դժվարություն հաղթահարելու պատրաստ ներքին ուժով:

Խ.Իսկանդարյանն առավել հաջող է դրսևորվել կամերային, քան մոնումենտալ քնույթի քանդակներում: Նա իր պատվավոր տեղն է զբաղեցնում մանր պլաստիկայով զբաղվող հայ լավագույն քանդակագործների շարքում:

Իսկանդարյանի ստեղծագործական անհատականությունը յուրատեսակ է. նրա քանդակն առաջին անգամ դիտելով՝ դժվար կլինի հետո սխալվել, թե ով է դրա հեղինակը: Իսկանդարյանի արվեստը տաղանդի, անկեղծության, աշխատասիրության համաձուլվածք է: Դրանով է պայմանավորված նրա աշխատանքների ճշմարտացի, կենսական հնչեղությունը: Ամենավաղ շրջանի գործերից մինչև ամենավերջինը նա հետևողականորեն զարգացման ընթացք է ապրել, պահպանել իր անհատականությունը՝ չշեղվելով իր ընտրած ուղուց:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. **Նադարյան Ն.**, Խաչատուր Իսկանդարյանի դիմաքանդակները, ԿԱՆԹԵՂ. գիտական հոդվածներ, 2 (63), 2015, էջ 210-218:
2. **Նադարյան Ն.**, Խաչատուր Իսկանդարյանի «Հուշեր հին Երևանից» քանդակաշարը, ԿԱՆԹԵՂ. գիտական հոդվածներ, 3 (64), 2015, էջ 259-267:
3. **Նադարյան Ն.**, Խաչատուր Իսկանդարյանի խմբաքանդակները, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասներորդ նստաշրջանի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, էջ 147-154:
4. **Նադարյան Ն.**, Խաչատուր Իսկանդարյանը որպես նկարիչ, ԿԱՆԹԵՂ. գիտական հոդվածներ, 2 (67), 2016, էջ 256-262:
5. **Նադարյան Ն.**, Խաչատուր Իսկանդարյանի դիմաքանդակային արձանիկները, Լրաբեր հասարակական գիտությունների, 1 (649), 2016, էջ 245-251:
6. **Նադարյան Ն.**, Խաչատուր Իսկանդարյանի «Գիքոր» քանդակաշարը, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասներկուերորդ նստաշրջանի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018, էջ 103-108:
7. **Նադարյան Ն.**, Խաչատուր Իսկանդարյանի մոնումենտալ քանդակները, Հայագիտական հանդես, № 1 (39), 2018, էջ 201-207:
8. **Նադարյան Ն.**, Խաչատուր Իսկանդարյանի ստեղծագործական կյանքի ուրվագիծը, ԿԱՆԹԵՂ. գիտական հոդվածներ, 1 (74), 2018, էջ 237-244:

НАДАРЯН НАРЕ ТАТУЛОВНА **Творчество Хачатура Искандаряна**

Диссертация посвящена всестороннему исследованию творчества Народного художника РА, скульптора Хачатура Искандаряна. В частности, были намечены следующие задачи:

- описать художественную жизнь того времени, в котором протекало творчество скульптора,
- представить его вклад в прочие виды искусства, рассмотреть те работы скульптора в жанре живописи и графики, которые создавались в основном во время его путешествий,
- исследовать произведения миниатюрной скульптуры и выявить присущие им художественные особенности,
- рассмотреть однофигурные и многофигурные скульптуры мастера,
- изучить скульптурные композиции “Древний Узбекистан”, “Япония”, “Танцоры”, “Гикор”, “Храбрый Назар”, “Воспоминания о старом Ереване”,
- представить скульптурные портреты,
- проанализировать известные и неизвестные экземпляры портретных статуэток,
- обратиться к монументальным и монументально-декоративным скульптурам.

В диссертации творчество Х. Искандаряна впервые подвергнуто комплексному исследованию. Представлена его творческая деятельность, проанализированы и систематизированы его произведения, освещены известные и неизвестные работы скульптора, в научный оборот введены новые архивные материалы, статьи из прессы того времени.

В диссертации особое внимание уделено скульптурам Х. Искандаряна, уточнены их названия и даты. Так, при изучении серии “Танцоры” было выявлено, что композиция “Бирманский танец”, включенная в упомянутую серию, в художественном альбоме Асмик Пилипосян “Армянская скульптура” была ошибочно представлена как работа Заслуженного деятеля искусств РА Самвела Манасяна, а в каталоге с предисловием Мариам Айвазян все работы, включенные в скульптурную серию “Древний Узбекистан”, поименованы иначе. Если, к примеру, Сюзанна Пилосян называет одну из работ этой серии “Отдыхающим узбеком”, то М. Айвазян именует ее “Тени в пустыне”, а “Мелкий торговец” называется “Продавцом лепешек”, “Узбек на муле” – “Узбеком, сидящим на ишачке”, “Беседующие женщины” – “Доверительным разговором” и т.д. Расходятся также и даты создания произведений: С. Пилосян относит все произведения серии к 1956-му году, а М. Айвазян – к 1962-му. Важными для исследования материалами послужили документы, найденные нами в отделе рукописей Национальной галереи Армении, а также хранящиеся в личном архиве скульптора.

Диссертация состоит из предисловия, четырех глав (Глава первая – “Жизнь Хачатура Искандаряна”, Глава вторая – “Миниатюрная скульптура

Хачатура Искандаряна”, Глава третья – “Портретные скульптуры Хачатура Искандаряна”, Глава четвертая – “Монументальные и монументально-декоративные скульптуры Хачатура Искандаряна”), заключения, списка использованной литературы и альбома иллюстраций.

В творческом наследии мастера миниатюрная скульптура занимает самое заметное место. Скульптор изображал обычных людей, черпая сюжеты и образы своих произведений из обычной жизни.

Несмотря на то, что Х. Искандарян использовал различные материалы (бронзу, медь, дерево, камень, алюминий и пр.), в основном он отдавал предпочтение пластичному, легко поддающемуся обработке материалу – бронзе, которая, в отличие от трудно обрабатываемых твердых и жестких материалов, предоставляла художнику возможность наиболее динамично, пространно и полно выразить собственную творческую натуру, создавая образы живых и реальных – радующихся и грустящих, думающих и чувствующих людей.

В творчестве скульптора своеобразно трактован и образ женщины. Если многих деятелей искусства привлекало обнаженное тело женщины, то Х. Искандарян видел в женщине прежде всего незаменимого друга, участливое, отзывчивое, трудолюбивое, готовое к самопожертвованию и в то же время здравомыслящее создание.

Произведения скульптора отличаются свободными композиционно-пространственными решениями и богатством пластических ракурсов.

С одной стороны, мастер опирался на традиции классической скульптуры, а с другой – учитывал достижения импрессионистов. Обе эти тенденции художник воплощал в малых фигуративных скульптурах, которые отличаются светлым, жизнеутверждающим пафосом.

Хачатур Искандарян является одним из редких армянских скульпторов, создавших трогательные, ностальгические, исполненные доброго и мягкого юмора произведения, посвященные старому, уходящему Еревану.

В портретных скульптурах художник воплотил образы современников, которые являются героями не по внешним признакам – внушительности лиц и жестов, а благодаря внутренней чистоте, искренности чувств, широте души, готовности к преодолению любых жизненных невзгод.

Хачатур Искандарян особо преуспел в создании скульптур камерного, а не монументального характера. Он занимает почетное место в плеяде лучших армянских скульпторов, занимающихся миниатюрной пластикой.

Творческая индивидуальность Х. Искандаряна весьма своеобразна – однажды увидев его скульптуру, трудно после этого ошибиться в определении того, кто именно является ее автором. Искусство мастера является своего рода сплавом таланта, искренности и трудолюбия. Именно этим и обусловлено живое и правдивое звучание его работ. Начиная с самых ранних произведений и заканчивая самыми последними, он последовательно проходил путь развития и самосовершенствования, в то же время сохраняя самобытность и не сворачивая с избранного пути.

NADARYAN NARE

The Oeuvre of Khachatur Iskandaryan

This dissertation is dedicated to the comprehensive study of the oeuvre of RA National People's Artist, sculpture Khachatur Iskandaryan. Particularly, the following issues were accentuated:

- to characterize the art life at the time of the artist's performance period,
- to present his contribution to other genres of fine arts, to speak about those pictorial and graphic styled sculptures of the artist, which were created during his travelling,
- to conduct the research of miniature sculpture masterpieces and to highlight their features and habits,
- to review the monofigure and multifigure sculptural compositions,
- to study the sculptural compositions of "The Ancient Uzbekistan", "Japan", "Dancers", "Gikor", "Nazar the Brave", "Memories of Old Yerevan",
- to present the sculpture portraits,
- to analyse all the known and unknown items of sculpture objet d'arts,
- to perform the study of the statuesque and ornamental sculptures.

This dissertation implements the comprehensive study of Iskandaryan's oeuvre for the first time, clarifying and précising their dates and names, highlighting his performance, analyzing and classifying his works, presenting either known and unknown creations of the master, involving all the recorded files and materials, as well as the media publications of that time, into the scientific circulation.

The main deal of attention in this dissertation is paid to Iskandaryan's sculptures, with précising the titles and dates of those. So, while studying "The Dancers" series it was discovered, than the composition called "Birmanian Dance", included in the series mentioned, in the art album of "Armenian Sculpture" developed by Hasmik Philiposyan, has been presented as a creation of Armenia's Honourous Fine Arts Master Samvel Manasyan, and in another catalogue, developed by Mariam Ayvazyan, all the works included in the "Old Uzbekistan" series were entitled differently as well.

If, for instance, Suzanna Pilosyan calls the work presented in her catalogue as "Uzbek at Rest", at the same time M. Ayvazyan calls it "Desert Shadows", and the one called "Petty Dealer" presented like "Pans Seller", "Mule Riding Uzbek" as "Uzbek Sitting on the Mule", "Talking Women" as "Frank Talk", and so on. The dates of the works vary as well. Pilosyan refers with the series mentioned to 1956, and Ayvazyan – to 1962.

During the research the materials and documents found at the department of manuscripts of the National Gallery of Armenia, as well as in the personal files of the sculpture, were used.

The dissertation comprises the foreword, four Sections (Section A “Khachatur Iskandaryan’s Life”, Section B “Khachatur Iskandaryan’s Miniature Sculpture”, Section C “Khachatur Iskandaryan’s Portrait Sculptures” and Section D “Khachatur Iskandaryan’s Monumental and Monumental-Decorative Sculptures”), conclusions, a list of references and a catalogue of illustrations.

So, in the art oeuvre legacy of Khachatur Iskandaryan the miniature sculpture takes the lion share. The sculpture created the characters of ordinary people, taking the scenarios and the spirit of his sculptures from everyday life.

Despite Khachatur Iskandaryan used different materials (bronze, copper, wood, stone, aluminum), he used to prefer a plastic, “easy going” material, the bronze, which, in distinct to other materials needed to be processed and surfaced very long, gave an option to the artist to express dynamically and largely his own creative nature, rising the characters of people being happy and sad, thinking and feeling, and, at last, simply looking like us.

The women characters in Iskandaryan’s oeuvre look different as well – if many artists are interested only in the naked female body, Iskandaryan views a woman as a buddy friend, hardworking, open-hearted creature always ready for self-sacrament, and presented her in his compositions exactly like this.

Maestro used to create his sculptures mainly in a free compositional-spatial prospect, within the richest range of aspects and sharpest, inventive imaging of characters.

On one hand, Kh. Iskandaryan referred to the classic habits, having considered on the other the achievements of impressionists. Both of these trends are applied to small figurative compositions, accentuating the ultimate meaning of life and being the reflection of rejoice, motion and kindness. Kh. Iskandaryan is the only Armenian sculpture who has created a series of miniatures dedicated to old Yerevan, comprising the most famous examples of his sculptures.

In his portrait sculptures the artist depicts people who are not heroes due to their external peculiarities like monumentality or facial expression, but due to their internal tranquility, open hearts, readiness to overcome any obstacles and troubles. Iskandaryan is especially successful in creating sculptures of cameral and not monumental style. He takes his place honor in the constellation of best Armenian sculpturers acting in the field of miniature plastics.

The creative personality of Iskandaryan is very peculiar, if you have once seen his sculpture, it will be almost impossible to make a mistake indentifying who is the author of it. Iskandaryan’s art is a kind of mix of talent, hard work and sincerity. These are the main preconditions for the “true and frank sound” of all his creations. Starting with the very early ones and finishing with the latest, he consequently passed the path of development and self-improvement, at the same time keeping his individuality and the path he has taken.